ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«01» սեպտեմբեր 2017 թվականի № 92-Ն

2017/2018 ԹԹ. ԱՇՈՒՆ-ՁՄԵՌ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի առաջին կետով հաստատված կարգի 136-րդ կետի 12-րդ ենթակետը, էլեկտրատեղակայանքների, անավարտ և ժամանակավոր կառույցների, էներգետիկայի բնագավառի կարևորագույն այլ օբյեկտների անխափան աշխատանքն ու շահագործումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել կենտրոնական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հ.Ա.Հարությունյան	- Նախարարի տեղակալ (նախագահ),
Լ. Շահվերդյան	- Նախարարի խորհրդական (նախագահի տեղակալ),
Ա.Գրիգորյան	-Էներգետիկայի պետական տեսչության վերլուծության, վիճակագրության և շահագործման համակարգման բաժնի պետ,
Մ. Մնացականյան	-«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր տնօրեն
Գ. Բալյան	-«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Մ. Ջալալյան	-«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրեն
Ա.Գրիգորյան	-«Հայկական ատոմային էլեկտրակայան» (ՀԱԷԿ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ:
Ա. Գևորգյան	-«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ տեխնիկական տնօրեն
Ռ.Խաչատրյան	-«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» («ԲԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրեն,
Կ.Սարգսյան	-«Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ Հրազդան-5 հիմնարկի տնօրեն (համաձայնությամբ),
Ա.Մնացականյան	-«Հրազ ՋԷԿ» ԲԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),

Դ.Գրիգորյան -«Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրեն (համաձայնությամբ),

Հ. Սարգսյան -«Միջազգային էներգետիկ կոորպորացիա» («ՄԷԿ») ՓԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),

Ա. Յոլյան -«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ արտադրության գծով տնօրեն (համաձայնությամբ),

2.«Երևան ՋԷԿ», «ԲԷՑ», «ՀԱԷԿ» ՓԲԸ-ների գլխավոր տնօրեններին՝

1) մինչև 2017թ. օգոստոսի 20-ը ստեղծել հանձնաժողովներ, գլխավոր ճարտարագետների կամ շահագործման գծով փոխտնօրենների նախագահությամբ՝ 2017/2018թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական աշխատանքների մեջ ներգրավելով փորձառու, առաջատար մասնագետների,

2) մինչև սեպտեմբերի 5-ը մշակել և հաստատել 2017/2018թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ու կատարման միջոցառումների պլան-ժամանակացույց և ապահովել դրա ժամանակին կատարումը: Հաստատված միջոցառումների պլան ժամանակացույցը ներկայացնել կենտրոնական հանձնաժողովին,

3) պատրաստականության վիճակի բերել, սարքավորումները, մեխանիզմները, նյութերը և այլ անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները,

4) վթարային վերականգնողական աշխատանքներ կատարելու համար նախապատրաստել անհրաժեշտ քանակությամբ մեխանիզմներ, ավտոտրանսպորտ և բրիգադներ,

3.Կենտրոնական հանձնաժողովի նախագահին՝ 2017/2018թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական աշխատանքների կազմակերպումն ու կատարումն ապահովելու նպատակով առաջարկել.

1) «ՄԷԿ», «ՀԷՑ», «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ներին, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Հրազդան-5» հիմնարկին և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ին՝ իրականացնել սույն հրամանի 2-րդ կետի ենթակետերով նախատեսված միջոցառումները,

2) մշակել ընկերության աշխատանքային ռեժիմները և համաձայնեցնել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հետ,

3) ընկերությունների գլխավոր տնօրեններին՝ 2017/2018թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանին անցման համար նախապատրաստական յուրաքանչյուր ամսվա աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկացնել կենտրոնական հանձնաժողովին մինչև հաջորդող ամսվա 5-ը, իսկ վերջնական արդյունքի հաշվետվությունը ներկայացնել՝ մինչև նոյեմբերի 15-ը:

4.«ԷԷՀՕ» ՓԲԸ-ին՝ 2017/2018թթ. աշուն-ձմեռ ժամանակաշրջանում համակարգի ռեժիմներն իրականացնելիս, խստորեն ղեկավարվել աշխատանքները կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով:

5.Կենտրոնական հանձնաժողովի նախագահին՝ համակարգել ընկերությունների հանձնաժողովների աշխատանքները և կատարված միջոցառումների մասին պարբերաբար զեկուցել ինձ:

6.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ